123 124. *Մատ. Ս. Էջմ. № 182/206 (Կար 176)· Աստուածաշունչ նկարազարդ, կաշէկազմ 26×19 սմ. մագաղաթ. 26,2×18,6 սմ. 580 թերթ։ ԳԻՐ. Ընտիր բոլորգիր, երկէջ 21×6 1/2 սմ.։ ԳՐԻՉՆԵՐ. Կիրակոս և Յովհաննէս Երզնկացիք։ ՍՏԱՑՈՂ. Գլաձորի նշանաւոր վարժապետ Եսայի Նչեցին։ ԺԱՄԱՆԱԿ. 1318 թ. Փրկչական. «յլրում մեզ մարդեղութե՟ թուին Ց՟ի Բ՟ի տ՟ն մերոյ և ԹԳԾ և ԺԸ. և ըստ խոսրովային տօմարին ՉԿԷ»։ ՏԵՂ. Անյայտ, բայց անկասկած Գլաձորում։*

Ծանօթ. *Ձեռագիրս ԺԴ. դարու և Գլաձորի դպրոցի գրչութեան արուեստի գլուխ գործոցներից մէկն է, թէ՛ գրի գեղեցկութեամբ և թէ մանրանկարների, ծաղկազարդերի ճոխութեամբ։ Գրքերի սկսուածքը զարդարուն և մանրանկարչութեան գունազարդ պէս պէս գրերով (թռչնագիր, մարդագիր, կենդանագիր)· հետևեալ տողը, երբեմն մի քանի տող, ոսկի երկաթագրով. պարբերութիւնների գլխատառերը ոսկեգիր, ինչպէս մեր նկարի մէջ (Տախտակ Զ.) Զ. և Գ.։ Աւետարաններում պարբերութիւնների առաջին տողերը, երբեմն և միւս գրքերում, կարմրադեղով։*

Յիշատակարանք 518բ. 540բ. 588բ։

Լուսանկարուած են ա) 301բ. Յովհաննէս Երզնկացու ձեռքը· բնագիրը 9×6,2 սմ., մեր նկարը 8,4×5,7 սմ.։ բ) 518բ. Կիրակոսի ձեռքը, բնագիրը 11 1/2×6,2 սմ., մեր նկարը 11,2×6 սմ.։

Նկարիչ. *Թորոս։ Ուրիշ Ձեռագիրներում ես, օր. № 181/353 (Կար. 175), այս երեքը միասին աշխատել են։ Իսկ Կիրակոս և Յովհաննէս Երզնկացիք բազմաթիւ գրքեր ունին գրած կամ ստացած, միասին կամ առանձին։*

127. *Մատ. Ս. Էջմ. № 1328/1314 (Կ. 1292)։ Մեկնութիւն աւետարանին Մարկոսի Բարսեղ վարդապետի, թուղթ. 26 1/2×18 1/2 սմ. 308 թերթ.։ ԳԻՐ, Բոլորգիր, միջեան 20×3,8 սմ.։ ԳՐԻՉ Մեկնութեանս հեղինակն ինքը Բարսեղ վարդապետ։ ՏԵՂ. «Եւ գրեցաւ սա ի վանս, որ զոչի Մաշկուոր, ի հայրապետութե՟ն տ՟ն Կոստանդեա կաթուղիկոսի Դրազարկեցւոյ»։ «Եւ էր ի ժամանակիս յայսմիկ վերակացու և առաջնորդ ս՟ր ուխտիս Տէր Հայրապետ եպիսկոպոս»։ ԺԱՄԱՆԱԿ. 1325 թ. Փրկչական. «Եւ էր թիւ հայոց ՉՀԴ.» տես նկարը Տախտակ ՀԵ։ «Արդ եղև վճար այսր մեկնութե՟ ի թագաւորութե՟ն Լևոնի որդւոյ Աւշնի, նորընծայ և գեղարոյս մանկանն յոյժ երկեղածի և ա՟ծասիրի»։*

Ծանօթ. *Այս ձեռագիրը արժանի է ուշադրութեան իբրև սկզբնական օրինակ* (original), *հեղինակի ձեռքով գրուած։*

Նկարուած է 308բ, յիշատակարանի վերջին մասը, բնագիրը 5,8×13,3 սմ. մեր նկարը 4,2×9 1/2 սմ.։

128. *Մատ. Ս. Էջմ. № 1572/1576 (Կ. 1534)· Ճաշական ոսկենկար, ազնիւ և նուրբ մագաղաթ, 13 1/2×9 1/2 սմ., 357 թերթ։ ԳԻՐ. Ընտիր բոլորգիր· 10×6,3 սմ.։ ԳՐԻՉ. Ստեփանոս վանական քահանայ· ՏԵՂ. Դրազարկ անապատ, որ ի Սիս։ ԺԱՄԱՆԱԿ. 1318 թ. Փրկչական։*

Ծանօթ. *Գրչի, տեղի և ժամանակի մասին մեր տեղեկութիւնը քաղում ենք յետին գրչի յիշատակարանից, որ օգտուել է անշուշտ սկզբնականից·*